

**Հունվարի 19-ին, Ստամբուլի
ժամանակով ժամը 15:10-ի
սահմաններում, սպանվել է «Ակոս»
շաբաթաթերթի գլխավոր խմբագիր
Հրանտ Դինքը**

ԵՐԵՎԱՆ, 19
ՀՈՒՆՎԱՐԻ,
ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր,
Ստամբուլի
ժամանակով ժամը
15:10-ի
սահմաններում,
սպանվել է «Ակոս»
հայկական
շաբաթաթերթի գլխավոր
խմբագիր Հրանտ
Դինքը:



Ինչպես

«Արմենպրես»-ի թղթակցի հետ հեռախոսազրույցում
ասաց Ստամբուլում լույս տեսնող մեկ այլ հայկական
թերթի՝ «Ժամանակի» գլխավոր խմբագիր Արա
Գոչունյանը, սպանությունը տեղի է ունեցել հենց
խմբագրության շենքի մոտ: Թուրքական
ոստիկանության հաղորդագրությունների համաձայն,
Հ. Դինքի վրա կրակել է մի երիտասարդ: Վարկածների
մասին առայժմ չի խոսվում: Ինչպես նշեց Ա.
Գոչունյանը, «միայն կարող ենք ենթադրություններ
անել, որոնցից, ըստ իս, պետք է ձեռնպահ մնալ, քանի
որ դեպքը շատ լուրջ է»:

«Սա ցնցող իրադարձություն է, չգիտեմ, ինչ ասել:
Հրանտը վերջին շուրջ 10 տարվա ընթացքում լուրջ
վաստակ ունեցավ թե՛ հայկական, թե՛ թուրքական
մամուլում՝ աշխատելով մաե միջազգային ՁԼՄ-ների
հետ: Նա իսկական մտավորական էր, յուրահատուկ,
հարցաքննական ոճ ունեցող լրագրող: Մի
անձնանավորություն էր, որն անկեղծ էր,
պատրաստակամ այլընտրանքային կարծիքներ լսելու:
Շատ էր աշխատում հայ -թուրքական
հարբերությունների բարելավման ուղղությամբ եւ
ուզում էր դրանք հաջողված տեսնել», - ցավով նշեց Ա.
Գոչունյանը:

**Հայաստանի նախագահը խստագույնս
դատապարտել է Հրանտ Դինքի
սպանությունը**

Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը
խստագույնս դատապարտել է Ստամբուլում լույս
տեսնող «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի
սպանությունը:
Ինչպես «Ազատություն» ռադիոկայանին փոխանցեց
նախագահի խոսնակ Վիկտոր Սողոմոնյանը,

Ռոբերտ Քոչարյանը ցավակցություն է հայտնել
Հրանտ Դինքի հարազատների եւ մերձավորներին:
«Հանրահայտ հայ լրագրող Հրանտ Դինքի
սպանությունը բազմաթիվ հարցեր է առաջացնում եւ
խստագույնս դատապարտելի է: Հույս ունենք, որ
Թուրքիայի իշխանությունները կանեն հնարավորը՝
մարդասպանին բացահայտելու եւ օրենքի ամբողջ
խստությամբ պատժելու համար», - հայտարարել է
նախագահի խոսնակը:

**Վարդան Օսկանյան. «Մենք խստորեն
դատապարտում ենք Հրանտ Դինքի
սպանությունը՝ անկախ
հանգամանքներից»**

«Մենք խորապես ցնցված ենք թուրքահայ
ականավոր գործիչ Հրանտ Դինքի սպանության
գույժով. մի մարդ, ով իր կյանքը ապրել է
հավատալով, որ հնարավոր է հասկացողությունը,
երկխոսությունը ու խաղաղությունը ժողովուրդների
միջեւ», - ասված է Ստամբուլի «Ակոս» թերթի
խմբագրապետի սպանության կապակցությամբ
Հայաստանի արտգործնախարար Վարդան
Օսկանյանի հայտարարությունում:
«Մենք խստորեն դատապարտում ենք արարքը՝
անկախ հանգամանքներից, եւ կոչ ենք անում
Թուրքիայի իշխանություններին իսկապես անհապաղ
միջոցներ ձեռնարկել՝ բացահայտելու սպանության
պատճառներն ու պատվիրատուներին», -
հայտարարել է Վարդան Օսկանյանը:

**Վ.Օսկանյանը կոչ է անում Թուրքիայի
իշխանություններին անհապաղ
միջոցներ ձեռնարկել բացահայտելու
Հ.Դինքի սպանության պատճառներն ու
պատվիրատուներին**

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈՒՆՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Մենք
խորապես ցնցված ենք թուրքահայ ականավոր գործիչ
Հրանտ Դինքի սպանության գույժով. մի մարդ, ով իր
կյանքն ապրել է հավատալով, որ ժողովուրդների միջեւ
հնարավոր է ըմբռնումը, երկխոսությունն ու
խաղաղությունը », -ասված է Ստամբուլում լույս
տեսնող «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ
Դինքի սպանության կապակցությամբ ՀՀ արտաքին
գործերի նախարար Վարդան Օսկանյանի՝
«Արմենպրես»-ին տրամադրած հայտարարության մեջ:
«Մենք խստորեն դատապարտում ենք արարքը՝
անկախ հանգամանքներից եւ կոչ ենք անում
Թուրքիայի իշխանություններին իսկապես անհապաղ
միջոցներ ձեռնարկել բացահայտելու սպանության
պատճառներն ու պատվիրատուներին», -նշել է ՀՀ ԱԳ
նախարարը:

Թուրքիայի ոստիկանությունը Հ. Դինքի սպանության կասկածանքով փնտրում է 18-19-ամյա մի երիտասարդի

ԱՆԿԱՐԱ, 19 ՀՈՒՆՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր Ստամբուլում գինված հարձակման հետևանքով սպանվել է «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը: Ոստիկանության տվյալներով, սպանությունը կատարվել է խմբագրատան մոտ: Ըստ NTV հեռուստաընկերության տեղեկատվության, ոստիկանությունը լրագրողի սպանության կասկածանքով փնտրում է 18-19-ամյա մի երիտասարդի, որը սպանությունից անմիջապես հետո թաքնվել է հանցագործության վայրից: Ինչպես հաղորդվում է, այստեղ հայտնաբերվել է ատրճանակի կրակված չորս պարկուճ, ինչից եզրակացնում են, որ Դինքի վրա կրակել են առնվազն չորս անգամ: Թուրքիայում Դինքը հայտնի էր նրանով, որն արժարժում էր սուր թեմաներ, այդ թվում՝ հայերի ցեղասպանության հիմնախնդիրը: Դրա համար նա քանիցս դատական հետապնդումների է ենթարկվել: Ըստ թուրքական հեռուստատեսության տեղեկատվության, լրագրողին քանիցս սպառնացել են ֆիզիկական հաշվեհարդարով, նման սպառնալիքներով նախեսառաջ հանդես էին գալիս Թուրքիայի ծայրահեղ աջ կազմակերպությունների ներկայացուցիչները:

«Ակոս» հայկական շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի կենսագրականը

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈՒՆՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր Ստամբուլում սպանվել է «Ակոս» հայկական շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը:

Հրանտ Դինքը ծնվել է 1954թ. Մալաթիայում: Յոթ տարեկան հասակում ընտանիքի հետ միասին ներգաղթել է Ստամբուլ: Տարրական եւ միջնակարգ կրթությունները ստացել է հայկական դպրոցներում: Լիցեյն ավարտելուց անմիջապես հետո ամուսնացել է: Հ. Դինքը ավարտել է նաև Ստամբուլի համալսարանի անասնաբուժության բաժինը: Այնուհետև ուսումը շարունակել է նույն համալսարանի փիլիսոփայության բաժնում: 1996թ. ի վեր աշխատել է «Ակոս» շաբաթաթերթում որպես մեկնաբան եւ գլխավոր խմբագիր: Թերթը, իրավմամբ, կարել էր կոչել թուրքահայ համայնքի ձայնը: Նա փորձում էր թերթը դարձնել Թուրքիայի ժողովրդավարական եւ ընդդիմադիր ձայնը, ինչպես նաև բարձարձայնել հայ համայնքի հանդեպ իրականացվող անարդարությունները: Թերթի առաջնային նպատակներից էր օժանդակել հայ եւ թուրք ժողովրդների, ինչպես նաև Հայաստանի եւ

Թուրքիայի միջև երկխոսության ձեւավորմանը:

Հ. Դինքը գտնվում էր դատական գործընթացում՝ երեք տարի առաջ Թուրքիայի Սանիտորիա քաղաքում «Ազգային փոքրամասնությունների եւ մարդու իրավունքները» թեմայով գիտաժողովում այսպես կոչված «թուրքական ինքնությունը» վիրավորելու համար: Եթե մեղքն ապացուցվեր, ապա նրան սպառնում էր երեք տարի ազատազրկում: Հ.Դինքը կարծիք էր հայտնել նաև, որ դատական գործընթացը սկիզբ էր առել նրանից, երբ ինքն ասել էր, թե «ինչ էր զգում տարրական դասարաններում, երբ պարտադրված էր անգիր ասել «Ես թուրք եմ, ես ազնիվ եմ, ես աշխատասեր եմ» արտահայտությունը: «Ես Թուրքիայի քաղաքացի եմ, բայց հայ եմ, եւ նույնպես ազնիվ ու աշխատասեր: Ես թուրք չեի, ես հայ էի»,- բացատրել էր Դինքը, թե ինչ էր զգում այդ ժամանակ: Նա նշել էր նաև, որ ինքը քննադատում էր թուրքական ազգային հիմներգը, որտեղ ասվում էր «իմ հերոսական ռասա» բառերը: «Ես չեմ երգում այդ տողերը, որովհետև ես դեմ եմ «ռասա» բառի օգտագործմանը», -ասել էր նա:

«ԱՐՅՈՒՆՈՏ ՁԵՌՔԵՐԸ ՀԱՍԱՆ ԴԻՆԻՆ»



Հայտարարել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը

Ստամբուլում սպանվել է «Ակոս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը: Սպանությունը կատարվել է ցերեկով այն պահին, երբ Դինքը դուրս է եկել խմբագրության շենքից: Ենթադրվում է, որ մարդասպանը եղել է երիտասարդ, մոտ 18-19 տարեկան: Սպանությունը կատարել է ատրճանակի կրակոցներով: Սպանության վայրում ոստիկանությունը հայտնաբերել է չորս պարկուճ: Ստամբուլի ոստիկանությունը մարդասպանին հայտնաբերելու համար ձեռնարկել է արտակարգ միջոցառումներ: Ուշ երեկոյան ձերբակալվել են 2 կասկածելիներ:

Այս վայրագ սպանությունը բուռն զայրույթ է առաջ բերել պոլսահայ համայնքում, ինչպես նաև թուրք մտավորականների շրջանում, որոնք, տեղեկանալով ողբերգական միջադեպի մասին, սպանությունը դատապարտելու համար շտապել են «Ակոսի»

խմբագրություն: Սպանությունից հետո այնտեղ է շտապել նաև Ստամբուլի նահանգապետ Մուամմեր Գյուլերը: Այդ ընթացքում Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հանդես է եկել սպանությունը դատապարտող հայտարարությամբ:

Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Դինքի սպանության մասին իմացել է նախարարների խորհրդի նիստի ժամանակ, ընդհատելով նիստը՝ անհրաժեշտ հրահանգներ է տվել սպանության բացահայտման ուղղությամբ: Վարչապետը կարգադրել է ներքին գործերի եւ արդարադատության նախարարներին անել հնարավորը սպանությունը բացահայտելու համար: Երկու նախարարներ իսկույն ուղեւորվել են Ստամբուլ: Էրդողանը խորը վշտով նշել է, որ արյունոտ ձեռքերն այս անգամ հասել են Դինքին: «Այս հարձակումն, ի դեմս Հրանտ Դինքի, կատարվել է մեր բոլորի դեմ, ուղղված է մեր միասնության եւ կայունության դեմ»:

Դինքի սպանությունն ըստ երեւութի սառը ցնցուղի ազդեցություն ունեցավ նաև թուրքական մամուլի ներկայացուցիչների վրա, որ նրանք, այդ թվում հանրային հեռուստատեսությունը, "Reuters"-ը AP-ին ինտերնետային էջերում իսկույն արձագանքել են միջադեպին: Նրանց են միացել նաև CNN-ը, BBC-ին "եւ այլ միջազգային լրատվական միջոցները:

«Ազգի» հետ գրույցում «Մարմարա» թերթի գլխավոր խմբագիր Ռոբեր Հատտեճյանը նշեց, որ խորապես ցնցված են սպանությունից: «Ինձ բարոյալքված, հուսախաբ են գգում: Այս երկրում հանրային կարծիքը պատրաստ չէ խիզախ կարծիքներ լսելու»: Ըստ Ռոբեր Հատտեճյանի, Հրանտ Դինքի սպանությունը հարված էր հայ համայնքին, Թուրքիային, խոսքի ազատությանը: «Հայ-թուրքական հարաբերություններում վերջերս նոր գաղափարներ էին առաջ քաշվում, եւ հույս կար, որ հին վերքը կարող է դարմանվել: Այս սպանությունը հարված էր այդ հույսին»:

Ռոբեր Հատտեճյանը ընդգծեց, որ համայնքը ցնցված է այդ սպանությունից: «Դինքը հաճախ համարձակ հայտարարություններ էր անում: Հայ համայնքը դեռևս պատրաստ չէր այդպիսի կարծիքների, եւ ոմանք վախենում էին, որ նման վախճան կարող էր լինել: Ինչ էլ որ ասենք, դեպքը ողբերգական է, դա մեզ 50 տարով հետ կտանի»:

«Ժամանակի» խմբագրությունից պրն Հատտեճյանի խոսքին հավելեցին, որ անգամ ենթադրելի չէր, թե այդ աստիճանի վայրագ ոճիր

կկատարվի հայի դեմ Ստամբուլում, դա անակնկալ էր համայնքի համար:

«Մարմարայից» եւ «Ժամանակից» ստացված տեղեկությունների համաձայն, Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը, որ երեկ երեկոյան վերադարձել էր Երուսաղեմից, պատրիարքարանում պատրաստվում էր մամուլի ասուլիս հրավիրել ինչպես հայկական, այնպես էլ թուրքական լրատվամիջոցների համար՝ հրապարակավ դատապարտելու Հրանտ Դինքի սպանությունը:

Երեկոյան Դինքի սպանությունը դատապարտեցին ՀՀ ԱԺ նախագահը, ԱԳ նախարարը, եվրոպական տարբեր կառույցների ներկայացուցիչներ: Դինքի ընտանիքին նամակ է հղել ՀՀ նախագահը:

Ուշ երեկոյան բողոքի ցույց տեղի ունեցավ Շիշլիում, որտեղ գտվում է «Ակօսի» խմբագրությունը: Թաքսիմի հրապարակից ծայր առած ցույցի մասնակիցների մեծ մասը երիտասարդներ էին:

Հրանտ Դինքը ծնվել էր 1954 թվականին, Մալաթիայում: 1961 թ. ընտանիքը տեղափոխվել է Ստամբուլ: 1996 թվականի ապրիլից Դինքն «Ակօսի» գլխավոր խմբագիրն էր: Ստամբուլի համալսարանի շրջանավարտ Դինքը անդամակցել է ընդհատակում գործող Թուրքիայի կոմունիստական կուսակցությանը: Հրանտ Դինքին թուրքական արդարադատությունը հետապնդել է համարձակ հայացքների համար: Նա 2005 թ. հոկտեմբերին թուրքերի ինքնությունը վիրավորելու համար դատապարտվել էր վեց ամսվա ազատազրկման: Սակայն դա չխանգարեց Դինքին, որ նա շարունակի բարձրաձայնել Հայոց ցեղասպանության մասին: Հատկապես վերջին շրջանում հաճախակի էին դարձել թուրք ազգայնամուլների սպառնալիքները նրա նկատմամբ:

«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱԶԳԻ ՀԱՅՏՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ցնցված ենք հայտնի հրապարակախոս, «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի դաժան սպանության կապակցությամբ: Տեղի ունեցած ոճրագործությունը ցավ է պատճառում յուրաքանչյուրիս: Հրանտ Դինքը անդավաճան էր լրագրողի իր կոչմանը և իր գրչի անկեղծությանը: Նա թուրքական հասարակությունում մարմնավորումն էր համերաշխության, հանդուրժողականության և

փոքրամասնությունների ազգային արժանապատվության: Դժբախտաբար, չարդարացան պատվախնդիր լրագրողի սպասելիքները՝ թեև «ինքը վախով լցված աղավնի է, բայցևայնպես, հուսով է, որ թուրքական հասարակությունում աղավնի սպանողներ չեն լինի»: Յավոք սրտի, այդպիսիք գտնվեցին: Կատարված դաժանությունը վտանգում է ազատ խոսքի իրավունքը և կարող է մեծ մտահոգություններ ծնել Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների շրջանում:

«Օրինաց երկիր» կուսակցությունը կոչ է անում Թուրքիայի կառավարությանը ձեռնարկելու բոլոր հնարավոր միջոցները դաժան ոճրագործության շուտափույթ բացահայտման և հանցագործների պատժելու համար:

ՕԵԿ լրատվական ծառայություն

**ՀԱՆՅԱԳՈՐԾ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՐՈՒՄ
Է «ՄԵԾ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ**

Իսկ կուսակցության ղեկավարն անընդունելի է համարում «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ» կարգախոսը

ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱՆ

Հրանտ Դինքի հուղարկավորությունից հետո թուրքական հասարակական կարծիքի եւ մամուլի ուշադրության կենտրոնում հայտնվել է սպանության գործի հետաքննությունը: Թուրքական անվտանգության ուժերը մարդասպան Օգյուն Մամասֆի, սպանության պատվիրատու Յասին Հայալի, վերջինի ղեկավարը Էրհան Թունջելի եւ մյուս չորս մասնակիցների ձերբակալությունից հետո Տրապիզոնում կատարել են եւս երկու ձերբակալություն, իսկ Բուրսայում, որտեղից հաճախակի էին սպառնում Հրանտ Դինքին, մեկ:

Պարզվում է խմբի ղեկավար Թունջելի պես ուսանող է նաեւ Բուրսայում ձերբակալված կասկածյալը: Նա տեղի «Ուլուդաղ» համալսարանի ճարտարագիտության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող է: Միաժամանակ հայտնի է դառնում, որ Տրապիզոնի Սեւծոլյան համալսարանի ուսանող Էրհան Թունջելը սպանության պատվիրատու Հայալի պես կապի մեջ է եղել աջ ծայրահեղական «Մեծ միասնություն» կուսակցության հետ: Նրանք Տրապիզոն այցելելիս ուղեկցել են այդ կուսակցության նախագահ Մուսիին Յազըջըօղլուին:

Ի դեպ, այս կուսակցությունն ստեղծվել էր «Գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության, Ազգայնական շարժում կուսակցության այն երիտասարդ անդամների հենքի վրա, որոնք տարածայնությունների մեջ էին Ալփարսլան Թյուրքեշի հետ: Ինքը՝ Յազըջըօղլուն անձամբ ղեկավարել էր Գորշ գայլերի երիտասարդական կազմակերպությունը:

Հարցաքննությունն ի՞նչ արդյունքի կհասցնի, դժվար է կռահել: Բայց որ «Ռադիկալի» գլխավորությամբ թուրքական կենտրոնական թերթերը հունվարի 24-ի համարներում հրապարակել են 2005 թ. ապրիլին Տրապիզոնում արված խմբակային մի լուսանկար, որտեղ նկատվում է «Մեծ միասնություն» կուսակցության առաջնորդի քիկունքում կանգնած Էրհան Թունջելի հանցավոր դեմքը, ակնհայտ է:

Հատկանշական է, որ Հրանտ Դինքի սպանությանն արձագանքել է նաեւ 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման գլխավոր ղեկավար, Թուրքիայի 7-րդ նախագահ Քենան Էվրենը: Ըստ «Հյուրիթթի» նա ասել է. «Այս սպանությունը չի կարող լինել որեւէ պատանու կամ նրա ընկերների գործը: Սպանությունը հանձնարարել են պատանուն, որ չդատապարտվի ցմահ բանտարկության, այլ մի քանի տարի հետո ազատ արձակվի: Ձերբակալվելիս նա փաթաթվելով թուրքական դրոշին, ասել է. «Կատարել եմ պարտականությունս»: Նրանց քիկունքում ավելի մեծ ուժեր են»:

Այդ ընթացքում, ինչպես նշում էր «Ռադիկալը», որպես հակազդեցություն թուրքահայ լրագրողի հուղարկավորության ժամանակ բարձրացված «Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ» գրությամբ պաստառների, «Մեծ միասնություն» կուսակցության նախագահ Մուսիին Յազըջըօղլուն տարածել է հաղորդագրություն, որտեղ ասվում է. «Ատելությամբ դատապարտում եմ մարդասպանության բոլոր դրսեւորումները: Սակայն չեմ ընդունում սպանությունների շահարկումը, որովհետեւ «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ» կարգախոսով փորձ է արվում մեղադրյալի աթոռին նստեցնել թուրքական պետությանն ու թուրք ազգին: Ինչո՞ւ չեն դատապարտում Պաղեստինում, Չեչնիսայում եւ Ղարաբաղում կատարվածը»:

Ինչ վերաբերում է այս կուսակցության հետ սպանության պատվիրատու Հայալի եւ հանցագործ խմբի ղեկավար Թունջելի առնչություններին, ապա Յազըջըօղլուն խուսափողական պատասխան է տվել

թուրք լրագրողների հարցերին: Նա նշել է, որ վերջիններս ժամանակ առ ժամանակ հաճախել են կուսակցության Տրապիզոնի կազմակերպություն, բայց չեն անդամակցել:

Համենայնդեպս, հունվարի 24-ին, մարդասպան Սամասթի, պատվիրատու Հայալի, սպանության մասնակցության մեջ կասկածվող եւս երեք ձերբակալվածների գործը հանձնվել է դատարան, որտեղ նրանց նկատմամբ որոշվել է որպես խափանման միջոց կիրառել կալանքը: Ներկայումս Դինքի սպանության գործով Ստամբուլում շարունակվում է երկու կասկածյալի հարցաքննությունը, մյուս երկուսը ազատ են արձակվել: Կալանվածներին հարուցվել է կանխամտածված մարդ սպանելու եւ հանցագործ զինյալ կազմակերպությանն անդամակցելու մեղադրանքներ:

ԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է «ԲՈՒՈՐՍ ՀԱՅ ԵՆՔ, ԲՈՒՈՐՍ ՀՐԱՆՏ» ԿԱՐԳԱԽՈՍԸ

Իսկ վարչապետ Էրդողանը մեղադրում է ազգայնականներին. «Աստծո տված հոգին առնելու դեպքում մարդասպան են դառնում»

Հունվարի 23-ին Ստամբուլում Հրանտ Դինքի հուղարկավորության ավելի քան 100 հազար մասնակիցներ, որոնց թիվը հունվարի 25-ի համարում 200 հազար էր ներկայացնում թուրքական «Սթար» թերթը, հնչեցրել էին «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ» կարգախոսը: Դրա հնչեցումը հունվարի 24-ին մամուլում խստագույնս քննադատել էր «Մեծ միասնություն» կուսակցության նախագահ Մուսխիմ Յազըջըողլուն:

Այս կուսակցությունը ավելի ծայրահեղական է, քան «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությունը՝ Ազգայնական շարժում կուսակցությունը: Հակառակ դրան, Քեմալ Աթաթուրքի հիմնադրամ ժողովրդա-հանրապետական կուսակցությունը համարվում է ժողովրդավարության եւ աշխարհիկ կարգերի երաշխիքը Թուրքիայում, անդամակցելով միաժամանակ Սոցիալիստիկ միությունների:

Այս ամենը, սակայն, չի խանգարում կուսակցության փոխնախագահ, Թուրքիայի ազգային մեծ ժողովի արտաքին հարաբերությունների

հանձնաժողովի անդամ եւ նախկին դեսպան Օնուր Օյմենին, որ նա Դինքի սպանությունը դատապարտելիս վերհիշի ԱՍԱԼԱ-ի զոհը դարձած 40 թուրք դիվանագետների մասին:

Թուրքական հանրային հեռուստատեսության տվյալներով Օյմենը նշել է. «Առ այսօր բացահայտված չեն մեր ընկերներից շատերին սպանողները: Երբ Գալիփ Բալքարը սպանվեց եւ նրա աճյունը տեղափոխեցին Թուրքիա, մեր հանգուցյալ ընկերոջ հուղարկավորությանը ընդամենը մասնակցեցին ընտանիքի անդամները ու արտգործնախարարության աշխատակիցները, այլ ոչ թե տասնյակ հազարավորներ: Ինչ խոսք, պետք է հարգել սպանվածների հիշատակը, դատապարտել սպանությունները, սակայն չպետք է մոռանալ նաեւ մյուս զոհերին եւ ուժ գտնել բացականչելու՝ «Մենք բոլորս Բալքար ենք, բոլորս էրեզ» կարգախոսը»:

Այդ առումով ժողովրդա-հանրապետական կուսակցության փոխնախագահ Օյմենին է միացել Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Դելեթ Բահչելին: Ինչպես երեկվա համարում նշում է «Սաբահը», նա դատապարտել է նրանց, ովքեր Դինքի սպանության առնչությամբ պահանջել են քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի վերանայումն ու մեղադրել ազգայնականներին: Բահչելին ասել է. «Դինքի սպանությունը նողկալի արարք է: Սակայն չի կարելի սպանության համար թուրքական պետությանը մարդասպան հռչակել եւ հաշիվ պահանջել նրանից, ինչն արել են սպանությունից անմիջապես հետո սեւ դրոշներով փողոցներն հեղեղած խմբավորումները: Հատկանշական է, որ այս շրջանակները իբրեւ թուրք ազգի ներկայացուցիչներ ոչ մի դեպքում չեն հայտնվում մեր նահատակների թաղման ժամանակ, սակայն ելնելով սպանվածի էթնիկ (հայկական) ծագումից, կարողանում են համապատասխան կարգախոս հնչեցնել, ինչը բացատրության կարոտ թյուրիմացություն է»:

Բահչելին «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ» կարգախոսը քննադատելիս դատապարտել է նաեւ երկրում ազգայնականներին հնարավոր հանցագործ որակելու դրսեւորումները: Թեեւ Ազգայնական շարժում կուսակցության նախագահը անուն չի նշել, սակայն վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ազգայնամոլ շրջանակներին հասցեագրված նույն օրվա մեղադրանքով ակամա հստակեցրել է, թե ում դեմ են ուղղված նրա խոսքերը: Ահա թե Ստամբուլի արդյունաբերողների միությունում ինչ է ասել Թուրքիայի վարչապետը. «Ազգայնականությունը

վիճարկման մշտական առարկա է: Ես չեմ ընդունում որպես ազգայնականներ նրանց, ովքեր ո՛չ օրենք են ճանաչում, ո՛չ իրավունք, հեշտությամբ սպանում են անպաշտպան մարդկանց, առանց գիտակցելու՝ հանուն ինչի, եւ դա համարում են ազգայնականություն: Բացի Աստծուց, ոչ ոք չի կարող առնել Աստծո տված հոգին եւ չպետք է առնի: Նման փորձի դեպքում ինքներդ կբացահայտեք ձեր բուն դեմքը, դառնալով մարդասպան, դահիճ եւ բռնատեր»:

Ի դեպ, մինչ ելույթը վարչապետ Էրդողանը Հրանտ Դինքի սպանության առթիվ ցավակցություն հայտնելու համար այցելել էր հանգուցյալի բնակարան եւ Պոլստ հայոց պատրիարքարան, որտեղ Մեսրոպ Բ Մութաֆյան պատրիարքին ասել էր, որ մարդասպանի ձերբակալությունը բավարար չէ, եւ իրենք ներկայումս աշխատում են սպանության բուն կազմակերպիչներին բացահայտելու ուղղությամբ: Միաժամանակ նա խոսեմ հայտարարությունների համար իր եւ երկրի անունից շնորհակալություն էր հայտնել ինչպես Պոլստ հայոց պատրիարքին, այնպես էլ «մեծարգո» տիկին Ռաքել Դինքին:

ԹՈՒՐԹԵՐԸ ԵԿԵԼ ԷՆ ՍԱԿ-Ի ՇԵՆՔԻ ԱՌՋԵՎ ՉԱԿԱԶԴԵԼՈՒ



Հրանտ Դինքի հիշատակի հավաքին

Ոչինչ չի փոխվել՝ 100 տարի առաջ եւ այսօր: 1915-ին Չոհրապի գլուխը ջարդեցին քարերով, քարն ու յաթաղանն այսօր փոխվել են ատրճանակի: Արտակարգ միջոցներ պետք չեն փնտրելու համար. Հրանտ Դինքին սպանող հանցագործը Թուրքիայի ղեկավարությունն է՝ իր վարած բացահայտ հայատյաց քաղաքականության, իր ժողովրդին սերնդեսերունդ կեղծված պատմություն ավանդելու համար:

Հունվարի 23-ին Նյու Յորքում, լրագրող Հրանտ Դինքի հուղարկավորության օրը հազարավոր հայեր էին հավաքվել ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի եւ Թուրքիայի հյուպատոսության առջեւ՝ ոգեկոչելու Թուրքիայում սպանված հայազգի լրագրողի

հիշատակը: Մոնավառությունը կազմակերպել էր ՀՅԴ Նյու Յորքի հանձնախումբը Նյու Յորքում եւ Նյու Ջերսիում գործող հայկական կազմակերպությունների աջակցությամբ: Սգո արարողությանը ներկա էին բազմաթիվ պոլսահայեր, որոնք անձամբ ճանաչել են Հրանտ Դինքին:

Հարություն Քյորօղլյանը Հրանտ Դինքի հետ ուսանել էր Սկյուտարի հայկական վարժարանում: Դինք ազգանունը, բացատրեց նա, գալիս է, թերեւս, Մալաթիայում գտնվող հայտնի մի տեղանունից, ուր սովորաբար ցորեն են աղացել:

Հայտնի հոգեբույժ Անի Քալաջյանը մեծ հուզմունքով հիշեց Հրանտ Դինքի հետ իր վերջին հանդիպումը Ստամբուլում: Հրանտը սատարել էր հոգեբույժին Թուրքիայում ցեղասպանության մասին խոսելու եւ որպես դրա հետեւանք՝ վրեժի սպառնալիքներից փրկվելու գործում: «Մենք պետք է պայքարենք, ասաց Անի Քալաջյանը, որպեսզի չեղյալ համարվի թուրքական այդ չարաբաստիկ 301-րդ հոդվածը, որով սերնդեսերունդ ատելություն է փոխանցվում»:

ՄԱԿ-ի շենքի առջեւ կայացող հիշատակի հավաքին հակազդելու էր եկել թուրքերի տասը հոգանոց մի խումբ, որ անամոթաբար վանկարկում էր հայերիս ուղղված կեղտոտ արտահայտություններ: Եթե չլինեք ոստիկանության միջամտությունը՝ բախումն անխուսափելի էր: Հրանտ Դինքն իր ուրույն կարծիքն ուներ Ֆրանսիայի Սենատի վերջերս ընդունած ցեղասպանության ժխտման համար պատիժ սահմանելու բանաձեռի վերաբերյալ:

Ուր է, որ նման մի բանաձեռն ընդունվի նաեւ Ամերիկայում. ասում էին ամերիկահայերը: Սրբություններ կան, որ չպետք է պղծվեն դեմոկրատիայով սանձարձակված խավար տարրերի կամայականություններից: Ի՞նչ զգացում կառաջանա, եթե սեպտեմբերի 11-ի ահաբեկչության զոհերի հիշատակը ձախողվի ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա գտնվող «Ալ Ղահդայի» համակիրների հակացույցից:

ՄԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ, Նյու Յորք

Եվրամիությունը կոչ է արել Թուրքիային բացահայտել Հրանտ Դինքի սպանությունը

Եվրամիությունն այսօր կոչ է արել Թուրքիայի

իշխանություններին հանգամանորեն հետաքննել «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանությունը, անվանելով հանցագործությունը «քռնության վայրագ գործողություն»։ Եվրամիության ընդլայնման հարցերով հանձնակատար Օլի Ռենը հայտարարել է, որ Դինքը «Թուրքիայում արտահայտվելու ազատության ջատագով էր»։ «Դինքը հարգված մտավորական էր, որը հետետողականորեն պաշտպանում էր իր տեսակետները եւ իր լուսնան է ներդրել բաց հրապարակային վիճաբանություն ծավալելու գործում»։ «Հավատում եմ, որ Թուրքիայի իշխանությունները հանգամանորեն կհետաքննեն այս հանցագործությունը եւ պատասխանատվության կենթարկեն մեղավորներին», - ըստ DPA գործակալության՝ շեշտել է Ռենը։

Եվրոպայի Հայ դատի հանձնախումբ. «Թուրքիան սպանեց Հրանտ Դինքին»

«Թուրքիան սպանեց Հրանտ Դինքին», - այսպես է վերնագրված «Ակոս» թերթի խմբագրապետի սպանության կապակցությամբ Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի տարածած հաղորդագրությունը։ «Այս արգահատելի սպանությունը մեկ անգամ եւս ապացուցում է, որ ազգայնամոլությունը խորը արմատներ ունի Թուրքիայում», - հայտարարել է Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի ատենապետ Հիլդա Չոբոյանը։ Եվրոպայի Հայ դատի հանձնախումբը համոզմունք է հայտնում, որ ինչ էլ բացահայտի գործի քննությունը, «թուրքական պետությունը մեծագույն պատասխանատվություն է կրում այս սպանության համար», եւ դատապարտում է Թուրքիայի իշխանություններին՝ լրագրողների եւ մտավորականների անվտանգությունն ապահովելու անընդունակության համար։ «Երբ սեփական բնակչությանը ասելություն եւ ուսուցանում այլոց հանդեպ, երբ արդեն մեկ դար շարունակ երեխաներին ներարկում եւ թուրքերի գերագույն ազգ լինելու գաղափարը, երբ այսօր սեփական տարածքում արտոնում եւ հանդուրժում եւ ծայրահեղական աջ կազմավորումները, պետք չէ զարմանալ, որ նման գործողություններ են ուղղվում որեւէ հայի դեմ», - հայտարարել է Հիլդա Չոբոյանը։ Մատնանշելով, որ «Թուրքիայի պետական ուղեգծին հակադրվող տասնյակ «այլախոհների» մեջ հենց հայն է դարձել մարդասպանների թիրախը», Հայ դատի հանձնախմբի ատենապետը համոզմունք է հայտնել, որ «այս կանխամտածված ակտը միտված է հայ համայնքը ահ ու սարսափի մթնոլորտում պահելուն՝ ակնհայտ ցույց տալու բոլորին, որ խոսքի ազատության եւ Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնելու հարցում կան սահմաններ, որոնք չի կարելի անցնել»։

Թուրքական մամուլը դատապարտում է Հրանտ Դինքի սպանությունը «Հրանտ Դինքը՝ Թուրքիան է»։ այսպիսի մեծադիր վերնագրով է այսօր լույս տեսել «Միլիթթ»-ը։ «Մարդասպանը ազգի դավաճան էր» վերնագիրն է իր առաջին էջում գետեղել «Հուրիթթ»-ը, իսկ «Մաբահ»-ը խոշոր տառերով գրել է՝ «Մեծագույն դավաճանությունը»։ Իսկ առաջատար թուրք մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդը, որը ժամանակին հարցազրույց է վերցրել Ռոբերտ Զոչարյանից, «Թրքիչ դեյլի նյուս» թերթում այսօր գրում է . - «Հրանտ Դինքը խորհրդանշում էր հանդուրժողականությունը։ Նրանք, ովքեր կրակեցին Դինքի վրա, չէին էլ հասկանում, որ կրակել են նաեւ Թուրքիայի վրա»։ Թուրքական մամուլը նաեւ մեջբերում է Հրանտ Դինքին, որը բազմաթիվ սպառնալիքներ ստանալով, իր վերջին խմբագրականում գրել էր. - «Ես շրջում եմ Ստամբուլով աղավնու նման մեկ աջ եմ նայում, մեկ ձախ, մեկ առաջ եմ նայում, մեկ հետ»։ «Առաջինթեղ փրես»-ը այսօր տեղեկացնում է, որ Հրանտ Դինքի հոգեհանգիստը տեղի կունենա երեքշաբթի օրը Ստամբուլի Սուրբ Մարիամ եկեղեցում։ Նրա աճյունն ամփոփվելու է Բալիքլի հայկական գերեզմանատանը։

Հայկական բոլոր եկեղեցիներում վաղը հոգեհանգստի արարողություն է տեղի ունենալու

Էջմիածնում եւ աշխարհի բոլոր եկեղեցիներում կիրակի օրը հոգեհանգստի արարողություն է տեղի ունենալու՝ ի հիշատակ «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի, որը երեկ սպանվել է Ստամբուլում։ Ինչպես ասված է Մայր Աթոռից այսօր ստացված հաղորդագրության մեջ, «Հունվարի 21-ին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր թեմերում Սուրբ եւ Ամնահ Պատարագի ավարտին կկատարվի հոգեհանգստյան մասնավոր պաշտոն բարեհիշատակ Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար»։ Հրանտ Դինքի հարազատներին ցավակցական նամակ է հղել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը։ «Սգում ենք մեր ողջ ժողովրդի հետ կորուստը եւս մեկ մտավորական անմեղ զոհի։ Խորին վրդովմունքով դատապարտում ենք դավադիր այս սպանությունը, որը մեր ժողովրդից խլեց շնորհալի, քաջասիրտ իր զավակին, ով իր գրիչը հավատով ծառայեցնում էր ի սեր արդար ու ազատ, խաղաղ կյանքի եւ ավելի լավ աշխարհի», - ասված է նամակում։ Վեհափառը նաեւ հույս է հայտնել, որ «Թուրքիայի իշխանությունները կբացահայտեն եւ օրենքի խստությամբ կպատժեն հանցագործներին»։

Ռոբեր Հատտեճյան. «Հրանտ Դինքին պատահածը հարված է մեզ բոլորիս»

«Անչափ ցնցված եմ, որովհետև մեր պաշտոնակցին պատահածը հարված է մեզ բոլորիս: Սա հարված է ոչ միայն Հրանտ Դինքին, այլև ամբողջ հայ մամուլին, հայկական հարցերով զբաղվողներից ավելի՝ մասնավորաբար այս երկրի մամուլին եւ այս երկրի ժողովրդավարական կարգավիճակին», - հայտարարեց Ստամբուլի «Մարմարա» թերթի գլխավոր խմբագիր Ռոբեր Հատտեճյանը՝ «Ազատություն» ռադիոկայանի հարցազրույցում մեկնաբանելով «Ակոս» թերթի խմբագրապետի սպանությունը:

«Կարծում եմ, որքան էլ մեր համայնքը ցնցվի, հանրային կարծիքը շատ ավելի պետք է ցնցվի այս ոճրի դիմաց», - շեշտեց ստամբուլահայ մտավորականը:

«Մարմարա»-ի խմբագրապետը նշեց, որ Դինքը «ընդհանրապես ընթացք էր տալիս հեռուստատեսությունից կամ մամուլից եղած բոլոր հրավերներին, մի քիչ շատ հաճախ հեռուստատեսությամբ, ուղիղ եթերով հաղորդումների էր մասնակցում եւ բավական խիզախ ելույթներ էր ունենում»:

«Ընդհանրապես, մա «ցեղասպանություն» բառը հանգիստ գործածող առաջին հայ մտավորականը եղավ [Թուրքիայում], որովհետև անպատեհություն չտեսավ կամ խոսքի ազատության պայմաններից մեկը նկատեց այդ ուղղությամբ խոսելը», - ասաց Ռոբեր Հատտեճյանը եւ հավելեց. - «Իրականում, այսպիսի կեցվածք ունենալով հանդերձ, Հրանտ Դինքը՝ ողբացյալ մեր ընկերը, ընդհանրապես թուրքերին եւ Թուրքիային ի նպաստ ելույթներ էլ էր ունենում հաճախ, որովհետև նրա բուն նպատակը երկուսի միջև մերձեցում ստեղծելն էր, իր անձնական տեսակետներն ունենալով, իր համոզմունքներն ունենալով»:

Միացյալ Նահանգները մտահոգություն է հայտնել Հրանտ Դինքի սպանության կապակցությամբ

Միացյալ Նահանգները մտահոգություն է հայտնել Ստամբուլում լույս տեսնող «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանության կապակցությամբ:

«Սա, անշուշտ, ողբերգական դեպք է», - այսօր հայտարարել է ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի փոխխոսնակ Թոմ Բեյսին: Բեյսին ասել է, որ տեղեկություն չունի, թե ով է պատասխանատու, եւ Թուրքիայի իշխանությունները դեռ քննություն են իրականացնում սպանության վերաբերյալ: Դինքի սպանությունը «որոշ մտահոգություն է առաջացնում» Միացյալ Նահանգներում, ասել է փոխխոսնակը: «Նա սպառնալիքներ էր ստանում իր հրապարակումների համար», - ասել է Բեյսին: «Մենք, իհարկե, երբեք չենք ցանկացել տեսնել մի իրավիճակ, երբ մարդիկ ահաբեկվում են, կամ իրականում այս կամ այն կերպ հաշվեհարդարի են ենթարկվում իրենց տեսակետներն ազատորեն արտահայտելու համար», - ասել է ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի փոխխոսնակը:

«Ֆրանսայրես»-ը փաստել է, որ «ԱՄՆ-ը Թուրքիային գնահատում է որպես ՆԱՏՕ-ի ռազմական դաշինքի առանցքային անդամի եւ հետետողականորեն աջակցում է Թուրքիայի անդամակցությանը Եվրամիությանը»:

«ՍՏԱՄԲՈՒԼԸ ԵՐԲԵՎԷ ԱՅՄՊԻՍԻ ԶՈՒՂԱՐԿՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՏԵՍԵԼ



Հրանտ Դինքին դեպի հավերժություն ուղևորել է ավելի քան հարյուր հազար մարդ»

Հ. ՉԱԶԻՅԱՆ

Հունվարի 23-ին Ստամբուլում թուրքահայ համայնքի գլխավորությամբ թուրքերի, քրդերի, ալավիների, հույների, ասորիների հոծ բազմությունը վերջին հրաժեշտը տվեց ականավոր լրագրող, հրապարակախոս Հրանտ Դինքին: Հուղարկավորության ողջ ընթացքն ուղիղ եթերով հեռարձակվում էր թուրքական հանրային հեռուստատեսության երկրորդ ալիքով, թուրքական եւ միջազգային այլ հեռուստակայաններով:

Հանգուցյալի դագաղը դրվել էր «Ակոսի» խմբագրատանը: Հուղարկավորության արարողությունը կատարվել էր Պոլսո հայոց պատրիարքարանի Սբ. Մարիամ Աստվածածնի մայր եկեղեցում: Թուրքական եւ միջազգային լրատվամիջոցների վկայությամբ «Ակոսի» գլխավոր խմբագրի խմբագրատնից ձգվող 8 կմ-անոց երթին մասնակցել է հարյուր հազար մարդ, սգո թափորի երկարությունը հասել է 3 կմ-ի:

Նույն թափորը եւս 8 կմ-անոց երթով Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցուց շարժվել է «Բալլբլը» հայկական գերեզմանատուն, որը հայ համայնքին դեռեւս 1453 թ. Կ. Պոլսո նվաճումից հետո տրամադրել էր սուլթան Մեհմեդ Երկրորդը: Հրանտ Դինքի հուղարկավորությանն Էրդողանի կառավարության անունից մասնակցել են պետնախարար, փոխվարչապետ Մեհմեդ ալի Շահինը, ներքին գործերի նախարար Աբդուլբադր Աքսուն, Ստամբուլի նահանգապետ Մուամեր Գյուլերը, Շիշլիի

քաղաքապետը, ինչպես նաև հույն եւ հրեա ազգային փոքրամասնությունների, ասորի, ալավի եւ կրոնական այլ խմբավորումների հոգեւոր ներկայացուցիչներ:

Մասնակիցների թվում են եղել Չախ-ժողովրդավարական կուսակցության գլխավոր նախագահ Չեքի Սեգերը, քրդամետ ժողովրդավարական հասարակարգ կուսակցության գլխավոր նախագահ Ահմեդ Թյուրքը, Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը, պատգամավորներ, այլ կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների պատվիրակություններ: Մասնակցել են նաև Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանը՝ ուղեկցությամբ գլխավոր հյուպատոսի, Ստամբուլում ԱՄՆ-ի, Հոլանդիայի, Շվեդիայի, Հունաստանի հյուպատոսները, գերմանական Կանաչների միության եւ ԵՄ-Թուրքիա միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահները, Հայաստանի եւ հայկական սփյուռքի ներկայացուցիչներ, որոնց գլխավորել են հոգեւոր առաջնորդները:

Հունվարի 24-ին թուրքական կենտրոնական թերթերն առաջին էջերում են անդրադարձել Հրանտ Դինքի երկրի համար աննախադեպ հուղարկավորությանը՝ հաճախ ամբողջ էջը նվիրելով սգո արարողությանը: «Հյուրիեթը», նշելով հուղարկավորությանն ավելի քան հարյուր հազար մարդու մասնակցության մասին՝ մեջբերել է հանգուցյալ Դինքի այրու՝ Ռաքելի խոսքերը, սգո արարողությանը «Միլիեթն» անդրադարձել է «Ըստ ձեզ Հրանտը մահացել է», «Ռադիկալը»՝ «Ստամբուլը Ստամբուլ դառնալուց ի վեր այսպիսի հուղարկավորություն չէր տեսել», «Չամանը»՝ «Ողջ Թուրքիան ուղեւորեց նրան» վերնագրերով, իսկ «Վաթանը»՝ «Ժողովուրդն այստեղ էր, որտե՞ղ էիք դուք» վերնագրով դիմել է ընդդիմադիր ժողովրդահանրապետական, «Ճշմարիտ ուղի», «Ազգայնական շարժում» եւ իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունների նախագահներին, ապա եւ ավելացրել. «Գլխավոր չորս կուսակցությունների առաջնորդները չեն մասնակցել հուղարկավորությանը, վախենալով ժողովրդի աջակցությունից»:

Ի դեպ, երեկ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այցելելով Հրանտ Դինքի բնակարան ու Պոլսո հայոց պատրիարքարան, անձամբ ցավակցություն է հայտնել տկն Ռաքելին եւ Մերոպ Բ Մութաֆյան պատրիարքին:

1915-Ը՝ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ: ՄԻՆՉԵՎ Ե՞ՐԲ

Քայլերթ դեպի Ծիծեռնակաբերդ եւ խոնարհում Հրանտի հիշատակին հավերժական կրակի մոտ

Երեկ մոտ 100 000 մարդ էր հավաքվել Ստ. Շահումյանի հրապարակում, որտեղից 13.30-ի դրությամբ թափորը շարժվեց դեպի Ծիծեռնակաբերդ: Տարեց ու հիվանդ մարդիկ, ովքեր չէին կարող քայլել, կազմակերպիչների կողմից տրամադրված ավտոբուսներով հասան Եղեռնի գոհերի հուշահամալիրի մոտ, ուր որպես կանոն հայ ժողովուրդը հավաքվում է ապրիլի 24-ին: Այս տարի ապրիլի 24-ը կարծես շտապեց ...

Հայաստանի Գրողների միության եւ Երեսանի քաղաքապետարանի կազմակերպած սգո քայլերթն ընթացավ հավուր պատշաճի, բազմաթիվ դրոշների, Հրանտ Դինքի նկարների ու բազմալեզու պաստառների ցուցադրությամբ: Ծեր ու մանուկ բռնել էին Դինքի նկարներն ու նրա անունով պաստառները, կարծես երկնքին էին պարզել իրենց հոգեկան ցավը, նաեւ՝ իր կյանքով ու մահով հարազատ դարձած Դինքի հիշատակը վառ պահելու ու նրա գործը շարունակելու իրենց պատրաստակամությունը: Քայլերթին մասնակցում էին մեծ թվով աշակերտներ, ուսանողներ ու ծերեր: Նրանցից ոմանք քայլում էին գլխահակ՝ մի տեսակ շփոթված մեծ հայրենակցի սպանության գույժից, վերջին օրերի լրահոսի տպավորությունից: «Փաստորեն ցեղասպանությունը դեռ չի ավարտվել: Մա մի անասելի դժբախտություն է, որ վերջ չունի, «Ազգի» հետ զրույցում ասաց Էլմիրա Փարեմուզյանը, որ եկել էր ամուսնու հետ միասին: Կարծես մի հարազատի կորցրի եւ հոգեպես շատ ծանր եմ տանում», ասում է հուզված կինը, որ վատառողջ լինելու պատճառով ավտոբուսով հասավ Ծիծեռնակաբերդ:

«Քանի կան մոլեռանդ ազգայնամուլներ, ոճրագործությունները վերջ չեն ունենալու», ասում է մի ուրիշ կին: Իսկ 65-ամյա տիկին Արմիկը համոզված է. «Մա պետականորեն կազմակերպված քաղաքականություն է հայերի նկատմամբ: Հունգարիայում չունեցա՞նք Գուրգեն Մարգարյանի սպանության դեպքը, էլի թուրքը չսպանե՞ց: Սակայն ոչ այնքան թուրք հասարակությունն է մեղավոր, որքան նրան հրահրող թուրքական պետությունը: Քանի Թուրքիան պետականորեն չի ճանաչել հայերի ցեղասպանությունը, անհատ մարդիկ, ովքեր հարցը կբարձրացնեն, վտանգված են լինելու, քանի որ

թուրքական պետությունը իրականում ոչ թե սաստողի, այլ հրահրողի դիրք է բռնել»:

Հովակիմյան Էլմիրան թիվ 128 դպրոցի փոխտնօրենն է: Նա Ծիծեռնակաբերդ է բարձրացել դպրոցականների հետ միասին: «Հրանտ Դինքի սպանությունը ազգային փոքրամասնության եւ խոսքի ազատության նկատմամբ թուրքական պետության թշնամանքի արտահայտությունն է: Դա տարածվում է նաեւ նոր սերնդի հոգեբանության վրա, որ նմանատիպ «դասեր» եւ ատելության չափաբաժին է ստանում դեռ դպրոցական տարիքից: Սա է ծնել 17-ամյա մարդասպանին: Մինչդեռ մենք՝ հայերս պատմությանը խելամիտ ու արժանապատվորեն մոտենալու դաստիարակություն ենք տալիս, չնայած երեխաներն էլ, մեծերս էլ այս պահին հոգեբանական խուճապի մեջ ենք»:

Սգո երթի մասնակիցների մեջ աչքի է ընկնում Տոռոզյան Փառանձեմը, 82 տարեկան այս մայրիկը, որի մինուճար որդին՝ Տոռոզյան Էդիկը դարաբաղյան պատերազմի առաջին զոհերից է, դժվարությամբ էր բարձրացել Ծիծեռնակաբերդի բարձունքը: Այստեղ հասնելու համար նա եկել էր Նոր Հաճըն քաղաքից: Տարեց ու որդեկորույս կինն իր հոգու պարտքն էր համարել գալ սգալու իր որդու փոխարեն: Նա ասաց, որ ամուսինն էլ կուզենար այստեղ լինել, բայց քանի որ առաջին կարգի հաշմանդամ է, մնացել է տանը: Ձեյթուն թաղամասի բնակչուհիներ 70-ամյա տիկին Աղավնին ու 64-ամյա տիկին Լորետան հարեւանուհիներ են: «Հունվարի 19-ի եղերական սպանությունից մինչ այսօր չենք խաղաղվում ողջ ընտանիքով, հարեւաններով, թաղամասով, ասում են նրանք: Հրանտի մահը ցեղասպանության մասին ճայնը լռեցնելու անհաջող փորձ էր: Սրանից հետո ոչ ոք չի լռելու այս մասին: Լռությունը դավաճանություն է ցեղասպանության միլիոնավոր զոհերի, դրանց թվում նաեւ՝ Հրանտ Դինքի հիշատակին»:

15-ամյա Հրանտ Խաչատրյանը պարտքի զգացումով կանգնել է Ծիծեռնակաբերդում ու «Ազգի» խնդրանքով բարձրաձայն խորհում է կատարվածի մասին՝ իր տարիքին անհամապատասխան լրջությամբ. «Հրանտ Դինքի սպանությունը թուրքական ազգայնամոլության հետեւանք է: Սրանից պետք է դասեր քաղեն եւ Եվրոպան, ե՛ւ Թուրքիան, ե՛ւ Հայաստանը՝ հայ-թուրքական երկխոսության պատրաստվելիս»: Հրանտը կարդացել է Հրանտ Դինքի վերջին հոդվածը, եւ առավել հուզված է հոդվածի ազդեցիկ ոճից, գաղափարախոսությունից, քան փաստից, որ ինքն ու Դինքը նույն անունն ունեն:

ԲՐԻՏԱՆԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ Ռ. ՖԻՍԹԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՉԻԳԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

«Միջին Արեւելքում տեղի ունեցող ներկայի իրադարձություններն աննախադեպ չեն, մինչդեռ այսօրվա դերակատարները հաճախ են կրկնում անցյալի սխալները»: Մոտավորապես վերոհիշյալ մտքերն է հնչեցրել բրիտանացի հանրահայտ լրագրող Ռոբերտ Ֆիսթը Միչիգանի համալսարանում 350 հոգանոց լսարանի առջեւ: Նա ընդգծել է նաեւ, թե քաղաքական գործիչները պետք է հասկանան, որ պատերազմները առաջին հերթին տառապանք ու մահ են նշանակում, ոչ թե հաղթանակ կամ պարտություն:

Ողջ աշխարհում համբավ ունեցող լրագրողն անդրադարձել է նաեւ Հայոց ցեղասպանությանը: Նույն թեմային մեկ գլխի ծավալով անդրադարձ է եղել նաեւ նրա «Առաջին ողջակեզը» վերնագրված գրքում: Բեյրութում բնակվելու երեսուն տարիների ընթացքում Ֆիսթը հարցազրույցներ է վերցրել ցեղասպանությունը վերապրած բազմաթիվ մարդկանցից, փաստաթղթեր է հավաքել, նաեւ այցելել է ցեղասպանության պատմական վայրեր: Ռ. Ֆիսթը հայտնել է, որ իր գիրքը, ներառյալ Հայոց ցեղասպանության մասին գլուխը, թարգմանվում է թուրքերեն: Ենթադրվում է, որ գրքի թարգմանիչն ու հրատարակիչը կանչվելու են Թուրքիայի դատարան 301-րդ հոդվածի հիմքով՝ թրքությունը ստորացնելու մեղադրանքով: Թեեւ Ռ. Ֆիսթը թուրքահպատակ չէ եւ չի բնակվում այդ երկրի սահմաններում, նա որոշել է Թուրքիայի հրավերի դեպքում մեկնել այնտեղ եւ կանգնել թուրքական դատարանի առջեւ:

Ռ. Ֆիսթը մեկուկեսժամյա իր դասախոսության ընթացքում անդրադարձել է նաեւ արեւմտյան լրատվամիջոցների մասնագիտական անթույլատրելի հնարքներին, որոնց հետեւանքով համաշխարհային իրադարձությունները խեղաթյուրված են ներկայացվում:

Խիստ հետաքրքրական այս դասախոսությունն ամփոփվել է «Հանուն քաղաքակրթության մեծ պատերազմը. Միջին Արեւելքի նվաճումը» եւ «Ցավակցել ազգին. Լիբանանի առեւանգումը» գրքերում:

ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՈՂՋ ՇՎԵԴԻԱՆ

Շվեդահայությունը իր ցավակցությունն է հայտնում Հրանտ Դինքի ընտանիքին, հարազատներին ու ողջ հայությանը:

Պոլսում հրատարակվող «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի եղեռնական սպանությունը դատապարտում է ու իր գայրույթն է արտահայտում ողջ Շվեդիան եւ շվեդահայությունը, դրան ձայնակցում են Շվեդիայի թուրք առաջատար մտավորականությունը եւ թուրքական կենտրոնական ֆեդերացիան:

Արդարության եւ խոսքի ու խղճի ազատության համար մարտնչող անվեհեր լրագրողն ու մտավորականը, ժողովուրդների բարեկամությանը հավատացող եւ ռասիզմի դեմ պայքարող առաջամարտիկը զոհվեց ոճրագործ մարդասպանի կանխամտածված ծրագրի համաձայն: Հայոց ցեղասպանությունը ամենակոշտ եղանակներով հերքող եւ հայության դեմ ատելությամբ լցված պաշտոնական Թուրքիայի ռեժիմի տակ ապրող ու գործող եւ ցեղասպանության դեմ բարձրաձայն աղաղակող եւ երբեկ չընկճվող Հրանտ Դինքը զոհվեց նույն արյունոտ ձեռքի կրակոցով ինչ զոհվել էին նրա նախնիները միլիոններով:

Միջազգային ողջ հանրության հետ միասին Շվեդիան նույնպես իր հարգանքի տուրքը մատուցանեց Հրանտ Դինքին եւ դատապարտեց այս մեծ մարդու եղեռնական սպանությունը: Արդարություն պահանջող բողոքագրերով, մամլո հաղորդագրություններով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ հանդես եկան Արտգործնախարար Կարլ Բիլդը, Չախ, Քրիստոնյա դեմոկրատ եւ այլ պառլամենտական կուսակցություններն ու քաղաքական եւ հասարակական բազմաթիվ կազմակերպություններ եւ մտավորականներ:

Շվեդիայի հայ համայնքը սգով ոգեկոչեց իր մեծ հայրենակցի հիշատակը: Կիրակի հունվարի 21-ին երկրի տարբեր քաղաքներում հայ սգակիրները մասնակցեցին եկեղեցական սգո արարողություններին եւ ծաղկեպսակներով ու մոմավառություններով զարդարեցին Հրանտ դինքի դիմանկարը:

Երեքշաբթի ժամը 17.00-ին բողոքի ցույց տեղի ունեցավ Ստոքհոլմի սրտում՝ «Մերգել Թորգիեթ» հրապարակում: Բողոքի ցույցը նախաձեռնել էր Շվեդիայի թրքական կենտրոնական ֆեդերացիան, որը Շվեդիայում փոքրամասնությունների ամենամեծ կազմակերպությունն է: Առավել առաջադիմական թեւը հաղթահարելով հակառակորդ թեւի ընդդիմությունը հաջողեց նախաձեռնել Հրանտ Դինքի հիշատակին նվիրված բողոքի ու մեծարման այս միջոցառումը: Բողոքի այս միջոցառմանը հրավիրված էին եւ մասնակցեցին ոչ միայն հայ, քուրդ եւ ասորի փոքրամասնությունների կենտրոնական կազմակերպություններն ու միությունները, այլ նաեւ շվեդական պետական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ մտավորականներ: Հրանտ Դինքի հերոսական գործունեությունը մեծարող եւ նրա տմարդի սպանությունը դատապարտող գրությամբ հանդես եկավ թրքական ֆեդերացիայի ներկայացուցիչը, խոսնակը իր ելույթը ավարտեց «մենք բոլորս Հրանտ Դինք ենք, մենք բոլորս հայ ենք » լուզուհով: Ներկաները մեկ ռուպե լուրջամբ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին ապա մոմեր վառեցին Հրանտ դինքի դիմանկարի առաջ:

Միջոցառմանը մասնակցում էին նաեւ թուրք եւ քուրդ կազմակերպությունների ներկայացուցիչներ ովքեր ժամ առաջ թրքական դեսպանատան առջեւ իրենց գայրույթը հայտնել էին սեւ ծաղկեպսակ դնելով թրքական դեսպանատան առջեւ:

Ապա բազմությունը շարժվեց դեպի Ստոքհոլմի կենտրոնական ABF-ի սրահ (նույն սրահը ուր դեռ մեկ ամիս առաջ ելույթ էր ունեցել Հրանտ Դինքը) Թուրքիայում մարդու իրավունքները պաշտպանող կոմիտեի, Շվեդական ժուռնալիստների կոմիտեի, Առանց սահմանի լրագրողների միության եւ շվեդական այլ կազմակերպությունների հրավերով Հրանտ Դինքի թաղման օրվա առիթով կազմակերպված մեծարման ու ռճազգործությունը դատապարտող հանդիպմանը:

Օրվա միջոցառումները ավարտվեցին Ստոքհոլմի Շիստայի եկեղեցում Սկանդինավիայի առաջնորդական փոխանորդ հայր Ներսես Խալաթյանի գլխավորությամբ եկեղեցական պատշաճ արարողություններով եւ մոմավառությամբ:

Շվեդական կենտրոնական հեռուստացույցը եւ մամուլը լայն կերպով անդրադարձան այս միջոցառումներին:

Միջոցառումները դեռ շարունակվում են եւ հունվարի 27-ին Ստոքհոլմում տեղի կունենա մեծ համահավաք ցույց կազմակերպված Շվեդիայի Հայկական միությունները համադրող կենտրոնի կողմից, որին մասնակցելու հայտ են ներկայացրել շվեդ, թուրք, քուրդ, ասորի եւ այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ, մտավորականներ եւ քաղաքական գործիչներ:

Հրանտ Դինքը դեռ մի քանի շաբաթ առաջ այցելելով Շվեդիա ելույթներ ունեցավ Շվեդական պառլամենտում եւ հանդիպումներ տեղի ունեցան շվեդական մամուլի եւ այլ հաստատությունների հետ: Նրա ցանկությունն էր մտախիչ ճանաչել Շվեդիայի հայկական համայնքը եւ իր գաղափարներին ու մտտեցումներին հաղորդակից դարձնել իր հայրենակիցներին, ադայես էլ եղավ, նրա Շվեդիա այցելությունը ավարտվեց Ուփսալայի հայ մշակութային միության կենտրոնատեղիում կազմակերպված հանդիպումով եւ հայկական համայնքի ներկայացուցիչների ու հայրենակիցների հետ անկեղծ ու մտերմիկ գրույցով:

Կարո Հակոբյան, Եվրոպահայերի Համագումարի նախագահ, tel: + 46- 707 25 85 93, Email: garo.hakopian@comhem.se, Ստոքհոլմ, 23 հունվ. 2007

ՈԳԵԿՈՉԵՑԻՆ ՀԱՅ ՄԵԾ ԳՈՐԾՉԻ ՈՒ ԽՄԲԱԳՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Հրանտ Դինքի սպանության լուրը կայծակի արագությամբ տարածվեց ինչպես գերմանահայության, այնպես էլ կրոնավորի համընդհանրապես «քրդացած» ու «թրքացած» հայրորդիների, հայ մեծ նահատակի գաղափարակիցների շարքերում Ֆրանկֆուրտում,— ինչպես նաեւ Հեսսեն, Վիսբադեն, Բյոլն եւ այլ քաղաքներում տեղի ունեցան ցույցեր, հավաքներ, կրոնական արարողություններ, պատարագներ, որոնց մասնակցեցին ու ելույթ ունեցան նաեւ Գերմանիայի թուրք եւ քուրդ համայնքի առաջադիմական, հակաֆաշիստական շարժումների ղեկավարներ, որոնք ոչ միայն դատապարտեցին կատարված ոճիրը, այլեւ ամբաստանեցին Թուրքիայի «հատուկ

ծառայություններին» («ՄԻԹ») այն կազմակերպելու եւ «սարքելու» մեջ: Հեսսենի հողանդական եկեղեցում տեղի ունեցած պատարագին մասնակցեցին Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարի մեծ մարտիկներ Ալի Էրթեմն ու Այշե Գյուլը, որոնք իրենց կրծքերի վրա կրում էին Հրանտ Դինքի պատկերները:

«Մեր Հայաստանի եղբայրներին ու քույրերին հայտնեք, որ Հրանտ Դինքը ապրում է, եւ մենք բոլորս Հրանտ Դինքի հայերից ենք...», արցունքն աչքերին «Ազգի» թղթակցին հայտնեց Այշե Գյուլը: Ավելին՝ երեքշաբթի երեկոյան, Ֆրանկֆուրտի թուրքական հյուպատոսարանի առաջ տեղի ունեցավ բողոքի մեծ հավաք, որին մասնակցեցին Թուրքիայի ձախակողմյան դեմոկրատական շարժման հարյուրավոր անդամներ: Ցատուճը մեծ է նաեւ զազա քրդերի շարքերում, որոնցից շատերը «քրդացած» հայեր են ու հիշատակեցին իրենց տատիկների եւ պապիկների սարսափազդու պատմությունները Հայոց ցեղասպանության մասին: Բողոքի ցույցերին եւ հավաքներին բուռն մասնակցություն բերեցին նաեւ Գերմանիայի ասորական-աշուրական կազմակերպությունների ղեկավարները, հեռուստատեսային ալիքներով անընդհատ ցույց տալով նահատակ Հրանտ Դինքի կյանքի ու նահատակության մանրամասները: «Հարկավոր է, որ ցեղասպանության եւ անպարտելի տառապանքների ենթարկված Թուրքիայի հայերը, ասորիները, քրդերն ու քաղաքացիները միասնաբար պայքարեն այդ բռնատիրական պետությունը կործանելու համար», «Ազգի» թղթակցին հայտնեց ասորական դեմոկրատական կազմակերպության Եվրոպայի բաժնի նախագահ Սաբրի Ալքանը:

Մյուս կողմից, ինչպես Թուրքիայի, այնպես էլ Գերմանիայի թուրքատառ մամուլը էջեր է տրամադրում Հրանտ Դինքի ու Թուրքիայում դեմոկրատական շարժման մասին: «Այս զազրելի սպանությունը նաեւ մեծ առիթ էր եվրոպացի վտարանդի համընդհանրապես «քրդացած» ու «թրքացած» հայերի, ասորիների, զազաների, կլբաշ-ալեւիների եւ ընդհանրապես Թուրքիայի դեմոկրատական շարժման համար՝ վերամիավորելու իրենց պայքարը», եզրափակեց համընդհանրապես գարթոնքի դրոշակակիր Տիգրան Կոստանյանը:

Հ. ՄՈՍԿՈՖՅԱՆ, Ֆրանկֆուրտ-Մայն